ԷԴԳԱՐ ՎԱՐՇԱՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան
Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ
edovarshamyan@mail.ru

ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆՈՒ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. Մեծ Հայքի թագավորություն, Պապ Արշակունի, Ներսես Ա Մեծ, նախարար, ներքին քաղաքականություն, եկեղեցի, Կեսարիա:

Ключевые слова и выражения. царство Великая Армения, Пап Аршакуни, Нерсес I Великий, министр, внутренняя политика, церковь, Кесария.

Key words and expressions. The Kingdom of Greater Armenia, Pap Arsacid, Nerses I the Great, minister, domestic policy, church, Caesarea.

Նախաբան

Պապ թագավորի գահակալության պատմափուլը (370-374 թթ.) հայոց պատմության ամենահետաքրքրական ու էական ժամանակաշրջաններից է: Խնդրո առարկա դարաշրջանին կամ դրա առանձին ենթափուլերի զարգացումներին անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Նրանցից յուրաքանչյուրը Պապի գործունեությունը քննության է առել ավելի կամ պակաս մանրամասնությամբ: Մասնավորապես, Պապի վարած ներքին քաղաքականությունն այսօր էլ ամբողջական և խորքային ուսումնասիրության կարոտ է մնում, և առկա է անհրաժեշտություն հավուր պատշաճի գնահատել հայոց թագավորի գահակալության դարաշրջանը: Ուսումնասիրության ընթացքում մեծ տեղ է հատկացվել Պապի թագավորության շրջանի ներքաղաքական իրադարձությունների բացահայտմանը՝ հավուր պատշաճի գնահատելու և ամբողջացնելու հայոց թագավորի պատմաքաղաքական կերպարը:

Ներքին միասնականության ամրապնդմանն ուղղված քայլեր

Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության քաղաքական պատմության էական բնորոշ կողմը մեկը թագավորական իշխանության և եկեղեցու միջև առկա հակասություններն էին: Դրանք ավելի ցայտուն դրսևորվեց Պապի գահ բարձրանալով: Սակայն, մինչ այդ հակասություններին անդրադառնալը, նշենք, որ դեռևս պարսիկների հետ պայքարի շրջանում Պապը շատ լավ գիտակցում էր հայոց եկեղեցու միավորիչ դերն ազատագրական պայքարում, և կաթողիկոս Ներսեսին խնդրեց գալ արքունի բանակ, որտեղ նա Գնել Արշակունու սպանությունից

ի վեր ոտք չէր դրել: Պետության միասնականության ամրապնդման հաջորդ էական քայլը երկրի մեծամեծերին, գավառակալ ու գավառատեր նախարարներին, ինչպես նաև ամբողջ բնակչությանը իր շուրջը համախմբելն էր: Պարսիկների դեմ ազատագրական պայքարը հաջողելու համար անչափ կարևոր էր հայոց բանակի վերականգնման գործընթացը, ուստի Մուշեղ Մամիկոնյանի ջանքերով աստիճանաբար վերականգնվեց այն, որի թիվը, ըստ Փավստոս Բուզանդի, սկզբնապես 10 հազար էր[1]: Կարճ ժամանակ անց այդ բանակի թիվը քառապատկվեց և արդեն Թավրեշում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ հայկական բանակի թիվը հասավ 40 հազարի՝ «արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար»[2]: Բանակաշինության գործընթացը համառ կերպով առաջ էր գնում և արդեն Ձիրավի ճակատամարտի նախօրեին Բագավանում «զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զօրսն Հայոց աւելի ևս քան զընտուն հազար, և կազմէին պատրաստութեամբ»[3]: Պապը հասկանում էր, թե ինչ մեծ դերակատարում կարող է ունենալ բանակը պետության ամրապնդման գործում: Կարող ենք արձանագրել, որ գոնե պարսիկների դեմ ազատագրական պայքարի և Պապի գահակալության սկզբնական շրջանում ներքին քաղաքականության մեջ իրականացված քայլերը դրական էին և նպաստեցին պետության ներքին միասնականության վերականգնմանը: Այսինքն, արտաքին ճակատում հաջողություններին համընթաց Պապը հաջողում էր նաև ներքին քաղաքականության մեջ: Այդ պատճառով էլ, ժողովրդական ընկալման մեջ Պապը եղել է սիրված թագավոր, և այստեղ մենք գործ ունենք մեծագույն գահակալի հետ: Հ. Հարությունյանը նշում է, որ Պապը վարում էր ինքնուրույն ներքին քաղաքականություն, որի նպատակն էր ստեղծել ուժեղ կենտրոնաձիգ պետություն: Այդ պատճառով էլ մի շարք իշխանների իրավունքները վերականգնում է, արքունիքի շուրջն է համախմբում գահին հավատարիմ իշխաններին, ուժեղացնում է բանակը[4]:

Սակայն, հավանաբար Թավրեշի ճակատամարտից որոշ ժամանակ անց, մենք ականատես ենք լինում պատժիչ մի գործողության. խոսքը Հայր մարդպետի սպանության մասին է: Դատելով Փավստոս Բուզանդի

---

1 Տե՛ս Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), Ե., 1987, էջ 2 86:

2 Նույն տեղում, էջ 2 90:

3 Նույն տեղում, էջ 2 94:

4 Տե՛ս Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-42 9 թթ.), Ե., 1945, էջ 12 8-12 9:

հաղորդած տեղեկություններից՝ այդ ժամանակ Մուշեղ Մամիկոնյանը գտնվում էր իր տոհմական Տարոն գավառի Ողական ամրոցում, որտեղ էլ նրան հասավ Պապ թագավորի նամակը, որով հրամայվում էր չարաչար մահով սպանել տեսչական այցով Տարոնում՝ սպարապետի վերահսկողության տակ գտնվող կալվածքներում շրջող Հայր մարդպետին: Թագավորը տեղյակ էր դարձել նրա՝ գաղտնաբար Արտագերս մտնելու և Փառանձեմ թագուհուն անարգելու փաստի մասին: Հայր մարդպետը հրավիրվեց Ողական և ամրոց մուտք գործելուն պես ձերբակալվեց ու տանջալից մահվան ենթարկվեց. «Եւ փոխանակ ’ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն զԴրգղակ ոմն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ հօր նորա գամու միջ լեալ նոյն գործ մարդպետութեանն»[5]: Արդյունքում, կենտրոնաձիգ պետություն կառուցելու ճանապարհին և երկրի միասնականության ամրապնդմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև դավաճան իշխաններին պատժելու գործընթաց, ինչի վառ ապացույցն էլ հանդիսացավ Հայր մարդպետի սպանությունը:

Պապ թագավորի եկեղեցական քաղաքականությունը

Հայոց թագավորի և կաթողիկոսի հարաբերությունների մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Փավստոս Բուզանդի աշխատության մեջ: Դատելով այդ տեղեկություններից՝ Պապի գահակալության սկզբանական շրջանում այդ հարաբերությունները համերաշխ էին: Այդ ժամանակ Ներսես Մեծը ձեռնամուխ եղավ եկեղեցու դիրքերի ամրապնդմանը, աղքատների խնդիրները հոգալուն, անաշխատունակների համար անկելանոցներ կառուցելուն: Նա վերականգնում էր ավերված եկեղեցիները, կառուցում նորերը, մեծացնում հոգևորականների թիվը[6]: Որքան էլ գործընթացը դրական էր, այնուամենայնիվ, ավատատիրական կարգերի պայմաններում սա նշանակում էր եկեղեցու դիրքերի կրկին ամրապնդում և տնտեսական հզորացում: Դրա համար էլ կարճ ժամանակ անց, մենք նկատում ենք հայոց թագավորի և կաթողիկոսի հարաբերությունների վատթարացում: Բնականաբար, Պապը շատ լավ գիտակցում էր այդ երևույթի վտանգավորությունը և կտրուկ քայլեր ձեռնարկեց այդ ուղղությամբ:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Ներսեսը շատ լավ հասկանալով, որ Պապն Արշակ Բ-ի արժանավոր զավակն է, և հեշտ չի լինի իր հսկողության տակ պահել թագավորին. «հանապազ կշտամբեալ յանդիմանէր և խրատէր, զի գտցէ զանձն իւր ’ի կորստենէ գործոց իւրոյ. և հանապազ խօսէր ընդ նմա,

[5] Փավստոս Բուզանդ, էջ 32 8:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 32 6-32 8:

զի փոյթ արասցէ ապաշխարութեան»[7]: Հաջողության չհասնելով՝ Ներսեսն անգամ Պապին թույլ չտվեց եկեղեցի մտնել: Սակայն այդ հարաբերությունների անկման պատճառներն ավելի խորքային էին: Ներսեսի նման քայլի գնալու պատճառը Պապի ներքին քաղաքա-կանությունն էր, որով սասանվում էր եկեղեցու հզորությունը: Եկեղեցու հետ հարաբերություններում Պապը դիմեց կտրուկ քայլերի:

Բանն այն է, որ ավերված երկրի համար մեծ բեռ էին դարձել Ներսեսի վերահիմնած վանական հաստատությունները, որոնց պահելն էապես խանգարում էր երկրի վերաշինությանը, դրանց գործունեության պատճառով մեծ թվով աշխատունակ մարդիկ հեռացել էին տնտեսության տարբեր ոլորտներից: Պարսկական վայրագությունների պատճառով երկրի բնակչությունը պակասել էր, ինչի հետևանքով պետության հասույթներն էապես նվազել էին[8]: Հատկանշական է այն հանգամանքը, որ Պապը երկրի տնտեսական ներուժի վերականգնումը չարեց ռազմական ներուժ ունեցող նախարարության հաշվին: Հավանաբար, նա գիտակցում էր, որ այդ դեպքում կհանդիպի ուժեղ դիմադրության, ինչն ամենևին էլ ձեռնտու չէր Պապին և մահացու վտանգ էր ներկայացնում պետության համար:

Սա նույնպես այն կարևոր պատճառներից էր հասկանալու համար, թե ինչու Պապը երկրի տնտեսական հզորության վերականգնման համար շեշտը դրեց եկեղեցու վրա: Հ. Մանանդյանը նշում է, որ ռազմական ուժից զուրկ եկեղեցին, որն այդ շրջանում տնտեսապես ու քաղաքականապես հզորացել էր, ավելի գործնական ոլորտ էր և թագավորի տնտեսական վերափոխությունների համար հարաբերականորեն անվտանգ[9]:

Եթե հավատանք Փավստոսին, ապա Պապը լոկ Ներսեսի մահվանն էր սպասում՝ չհանդգնելով նրան սպանել, քանի որ «՝ի թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւք չիշխէր, և ոչ սակաւ մի համարձակել ՝ի նա, թող թէ մահու աղագաւ…զօրքն ամենայն չառնուին յանձն զայսպիսի ինչ առնել»[10]: Բնականաբար, այս իրողությունն ուներ իր պատճառները: Բանն այն է, որ հայոց եպիսկոպոսները կաթողիկոս օծվում էին Կեսարիայում և արժանանում էին Հռոմի հավանությանը, և նման կարգի մարդու սպանությունը Հռոմում կարող էր ամենևին էլ աննկատ չմնալ: Գուցե սա

[7] Նույն տեղում, էջ 32 8:

[8] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հատոր Բ, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք Ա, (IV դարի սկիզբ – IX դարի կես), (այսուհետև՝ Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հտ. Բ, գ. Ա), Ե., 2 018, էջ 131-132 :

[9] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Ե., 1957, էջ 2 08:

[10] Փավստոս Բուզանդ, էջ 330:

ըմբռնում էր նաև Պապը և չէր ցանկանում խորացնել հակասությունները կաթողիկոսի հետ: Այդուհանդերձ, Փավստոսը պնդում է, թե Պապը Ներսեսին Եկեղյաց գավառի Խախ ավանում գտնվող իր ապարանք հրավիրեց սպանելու նպատակով: Ըստ պատմիչի՝ Պապը հենց ընթրիքի ժամանակ էլ թունավորեց կաթողիկոսին: Ներսեսն իսկույն դա հասկացավ և տիրոջը խնդրելով հոգին ընդունել՝ հեռացավ իր կացարան: Նրա մոտ հավաքվեցին Մուշեղ Մամիկոնյանը, Հայր մարդպետն ու մյուս սեղանակից նախարարները և, իբր տեսնելով նրա ծանր վիճակը, առաջարկեցին հակաթույն ընդունել: Սակայն Ներսեսը, չնայած արյունահոսությանը, մերժեց՝ ասելով հետևյալը. «մեծապէս եղև ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վասն զգուշութեան պատուիրանացն Քրիստոսի»[11]:

Ներսեսը մահացավ 373 թ.: Թագավորի կողմից նրան թունավորելու Փավստոսի պնդումները կասկածի տակ առնվեց միայն 19-րդ դարից սկսած[12]: Մ. Օրմանյանը կարծում է, որ կաթողիկոսը թոքերի անբուժելի հիվանդություն է ունեցել, ինչը ցույց են տալիս նրա կողմից դարմանները մերժելը և կրծքի վրայի հացաչափ կապուտակի մասին հիշատակությունը, որոնք ախտի նշաններ են, այլ ոչ թե թույնի[13]: Ս. Մալխասյանցը գրում է, որ Ներսես Մեծը վախճանվեց արյունաքամ լինելուց, երբ թոքերի մեջ մի մեծ երակ պատռվեց, ինչը թոքախտավորների հետ հաճախ է պատահում: Ուստի պատահական չէ կաթողիկոսի կողմից հակաթույնից հրաժարվելը, քանզի հիանալի գիտեր, որ իրեն չեն թունավորել[14]: Հ. Մանանդյանը, հենվելով Ամիանոսի հաղորդումների վրա, ցույց է տալիս, որ իրականում Պապն է եղել խարդավանքների ու ստոր դավերի զոհ[15]: Յ. Մարկվարտը նշում է, որ եթե Պապը, իրապես, թունավորած լիներ Ներսեսին, ապա Կեսարիայի մետրոպոլիտ Բարսեղն իրեն ենթական քահանայապետի սպանության համար հայոց թագավորին պատասխանատվության

---

[11] Տե՛ս նույն տեղում, էջ 332 :

[12] Տե՛ս Գարագաշեան Ա., Քննական պատմութիւն հայոց ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական եւ բանասիրական տեղեկութեանց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 12 4, 146: Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966 , էջ 480-482 : Տե՛ս Մուրատեան Ե., Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, 1900, էջ 141-152 :

[13] Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Կ. Պոլիս, 1912 , էջ 2 18-2 19:

[14] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հտ. Բ, գ. Ա, էջ 133:

[15] Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 2 10:

կիրավիրեր[16]: Ամփոփելով, կարող ենք ամրագրել, որ այս հիմնախնդիրն այսօր էլ շարունակում է բաց մնալ պատմագիտության մեջ: Կարծում ենք, որ Պապը, հասկանալով նման արկածախնդրության վտանգավորությունը, չէր դիմի նման քայլի, և առավել հավանական ենք համարում կաթողիկոսի վատառողջ լինելու տեսակետը: Նույնիսկ Ամիանոսը, որ ժամանակակից հեղինակ է, ոչինչ չգիտի Պապի կողմից կաթողիկոսին թունավորելու մասին և նրան ուղղված լոկ մի մեղադրանք է հիշում՝ Գլակին ու Արտավանին սպանելու վերաբերյալ: Եթե Պապը սպանած լիներ կաթողիկոսին, ապա երկրի ներսում լուրջ դժգոհություն կառաջանար ընդդեմ հայոց թագավորի՝ ի դեմս Մամիկոնյանների:

Անդրադառնանք Պապի եկեղեցական քաղաքականությանը: Այսօր էլ դժվար է մատնանշել, թե երբվանից է հայոց թագավորը ձեռնամուխ եղել այդ քաղաքականությանը, սակայն պետք է ենթադրել, որ առաջին քայլերը ձեռնարկվել էին դեռևս Ներսեսի կենդանության օրոք, ինչի պատճառով էլ նրանց հարաբերությունները լարվել էին: Այսպես, պատերազմից տուժած տնտեսությունը վերականգնելու նպատակով Պապը «զկարգս պտղոյն և զտասանորդացն՝ որ ’ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ յեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ»[17]: Դեռևս 4-րդ դարի սկզբներին, Տրդատ Գ Մեծ թագավորի օրոք, գյուղական հոգևորականությանը տնտեսապես սատարելու համար ավաններում «յեւթն հողս երդոյ», այսինքն՝ յոթ երդի կամ ծխի հողամասեր էին հատկացվել: Պապ թագավորը, որ պետք է զինվորականներին ծառայության դիմաց վարձատրեր, «եւ հատ նա յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր Տրդատայ առ մեծաւն Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն հողոյն զհինգն հատան էր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ գեւղ մի երէց և սարկաւագ, և զայն ’ի սպասու կացուցանէր յիւր ’ի ծառայութեան զեղբայրս և զորդիս երիցանցն և սարկաւագացն»[18]: Փավստոս Բուզանդը Պապին մեղադրում է նաև այլ հանցանքների մեջ: Ըստ նրա՝ թագավորը կարգադրեց ավերել Ներսեսի հիմնած որբանոցներն ու այրիների ապաստարանները և փակել կուսանոցները: Պապը հրամայեց պիղծ խառնակության տալ հավատավոր կույսերին: Փակվեցին նաև Ներսեսի հիմնադրած հիվանդանոցները և

[16] Տե՛ս J. Markwart, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, s. 157.
[17] Փավստոս Բուզանդ, էջ 348:
[18] Նույն տեղում, էջ 352 :

հեռացվեցին աղքատների վրա նշանակված տեսուչ վերակացուները: Պատմիչի նկարագրությամբ՝ Ներսեսի օրոք ոչ մեկը չէր համարձակվում Մեծ Հայքում ուրիշի կնոջը խլել կամ իր կնոջը թողնել, սակայն Պապն այդ կարգը խախտեց և թույլատրեց ամուսնալուծությունը: Եկեղեցին արգելել էր մահացածների վրա անհուսությամբ լաց լինելը և հեթանոսական սովորությամբ նրանց ողբալը, սակայն թագավորը դա թույլատրեց[19]: Հ. Մանանդյանը նշում է, որ Պապը մեղադրվում էր հեթանոսության նկատմամբ հանդես բերած ներողամտության ու հանդուրժողականության մեջ[20]: Ըստ Փավստոսի տեղեկությունների՝ Ներսեսի մահից հետո «բազում մարդիկ 'ի հնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին 'ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ և կամէին գործել, համարձակութեամբ գործէին. բացում պատկերս կանգնեալ, երկիր պագանէին»[21]: Պատմիչը նշում է նաև, որ թագավորը փակել էր նաև օտարանոցներն ու հիվանդանոցները, ինչպես նաև մենաստանները: Ամփոփելով կատարվածը՝ Փավստոս Բուզանդը գրում է. «Եւ 'ի ժամանակին նուազէին ամենայն կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց»[22]: Ա. Աննինսկին նշում է, որ համաձայն Պապի եկեղեցական քաղաքականության՝ սահմանափակվում էր եկեղեցական դասի ազատությունը զինվորական ծառայությունից և պահանջվում էր, որ երեցների ու սարկավագների եղբայրներն ու որդիները մտնեն արքունի ծառայության մեջ[23]:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ Պապի գահակալության պատմափուլում էապես փոխվել էր հայոց թագավորության ներքին միջավայրը: Երկրի տուժած տնտեսությունը վերականգնելու, պատերազմից հետո բնակչության աճը բազմապատկելու, եկեղեցական դասի ազատությունը սահմանափակելու, հայոց բանակի կազմը համալրելու, արքունիքի եկամուտները ավելացնելու, արքունական հողերը ավելացնելու, եկեղեցու քաղաքական և տնտեսական հզորությունը թուլացնելու նպատակով Պապը որդեգրեց հույժ խելամիտ քաղաքականություն: Այս ամենը կատարվեց առավելապես եկեղեցու հաշվին: Բնական է, որ Պապը հոգևորականության աչքում պետք է դառնար

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 348-350:
[20] Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 2 11:
[21] Փավստոս Բուզանդ, էջ 352 :
[22] Նույն տեղում, էջ 352 :
[23] Տե՛ս А. Аннинский, История армянской церкви (до XIX века), Кишинев, 1900, с. 31.

անընդունելի գործիչ, ինչի համար էլ Փավստոս Բուզանդը նրան մեղադրում է ամենաանհավանական մեղքերի և արատների մեջ: Մյուս կողմից ակնհայտ էր, որ այս քաղաքականությունն ուղղված էր եկեղեցին և պետությունն օտար միջամտությունից զերծ պահելուն, և այն իր էությամբ բխում էր հայոց պետականության շահերից: Այսինքն, թիրախ ունենալով երկրի հզորացումը, երիտասարդ գահակալը փորձում էր պետության բոլոր կարևոր օղակները համախմբել արքունիքի շուրջ:

Բ. Հարությունյանն իրավացիորեն նշում է, որ տարտամ և անորոշ մեղադրանքները լոկ վկայում են, որ երկիրը ծանր կացությունից դուրս բերելու թագավորի միջոցառումները, շոշափելով եկեղեցու ավատատիրական շահերը, մեծապես անհանգստացնում էին դրանցով առաջնորդվող թե՛ կաթողիկոսին և թե՛ հոգևորականությանը[24]:

Նոր կաթողիկոսի ձեռնադրումը

Պապ թագավորի ներքին քաղաքականության հաջորդ կարևոր հանգրվանը նոր կաթողիկոսի ձեռնադրման գործընթացն էր: Սակայն այստեղ առկա էին խնդիրների որոշակի համախումբ: Բանն այն է, որ մինչ այս կաթողիկոս ձեռնադրվում էին թագավորի համաձայնությամբ, սակայն կայսրությունն իր հերթին մշակել էր հատուկ կանոնակարգ, ըստ որի՝ Կեսարիայի մետրոպոլիտը հայոց կաթողիկոսին ձեռնադրում էր միայն Մեծ Հայքի թագավորի և Փոքր Հայքի եպիսկոպոսների երաշխավորական նամակները ստանալու դեպքում: Բ. Հարությունյանը նշում է, որ ըստ էության Փոքր Հայքի և ոչ մի եպիսկոպոս իրեն հարվածի տակ չէր դնի ու երաշխավորական նամակ չէր տա մի թեկնածուի, որը կայսերական արքունիքի և Կեսարիայի մետրոպոլիտության հավանությանը չէր արժանանա[25]: Ակնհայտ էր, որ նման կանոնակարգի պայմաններում առկա էր հռոմեական հոգևոր իշխանության որոշակի գերակատարություն հայոց հոգևոր իշխանության նկատմամբ: Եվ ահա այս խիստ կարևոր քաղաքական խնդրի լուծման վրա էլ կենտրոնացավ Պապ թագավորը: Անհրաժեշտ էին արմատական քայլեր հոգևոր ոլորտում Հռոմի գերիշխանությունից ազատվելու համար, իսկ դրա համար պետք էր, որ Մեծ Հայքի կաթողիկոսը ձեռնադրվի տեղում և չստանա Կեսարիայի մետրոպոլիտի հավանությունը: Գործընթացը դեռևս սկսվել էր Պապի հոր՝ Արշակ Բ-ի, օրոք, երբ Չունակին Մեծ Հայքում կաթողիկոս ձեռնադրեցին հայ եպիսկոպոսները, սակայն այն պաշտոնական բնույթ ստացավ միայն Պապ թագավորի օրոք: Եվ հայ եկեղեցու անկախացման հիմքերը դնելու

---

[24] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հտ. Բ, գ. Ա, էջ 135:

[25] Տե՛ս նույն տեղում, էջ 135:

համար մենք պարտական ենք Պապին: Հայոց թագավորը եկեղեցին տարավ բացարձակապես անկախանալու ճանապարհով, որը բխում էր ինչպես հայոց պետականության, այնպես էլ՝ եկեղեցու շահերից:

Համաձայն Փավստոսի՝ «եղև յետ մահուանն հայրապետին Ներսէսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր ’ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: Ետ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. և էր նա փոխանակ նորա»[26]: Հմտորեն օգտագործելով Կեսարիայի մետրոպոլիտության երկատվելը և այնտեղ առաջացած խառնակ դրությունը[27]՝ Պապը հայոց կաթողիկոսի ձեռնադրությունը կազմակերպեց Վաղարշապատում հայ եպիսկոպոսների ձեռքով՝ առանց Կեսարիա ուղարկելու[28]: Ըստ Մովսես Խորենացու՝ «կալաւ զաթոռն ամս չորս»[29]: Սեն-Մարտենը ենթադրում է, որ Հուսիկ եպիսկոպոսը Մեծ Հայքի «Իսակոկիս» եպիսկոպոսն է, որը Սոկրատի Եկեղեցական պատմության մեջ հիշատակված է 364 թ. Անտիոքի ժողովի մասնակիցների թվում[30]: Հ. Մանանդյանն էլ ենթադրում է, որ Փավստոսի մոտ «Յուսիկ» անունը աղավաղված ընթերցված է փոխանակ «Իսահակ»-ի[31]: Մ. Օրմանյանը կարծում է, որ Հուսիկ կաթողիկոսը նույն ինքը՝ Արշակի օրոք Ներսեսի տեղը զբաղեցրած Շահակ Մանազկերտցին է[32]: Ինչո՞ւ էր Պապ թագավորը կաթողիկոսական աթոռը Լուսավորչի տոհմի իրավասությունից հանձնում Աղբիանոսյաններին: Մ. Օրմանյանը նշում է, որ հանգամանքները ստիպում էին, որ նոր կաթողիկոսի հարցն արագ լուծվեր: Պապին հարկավոր չէր Գրիգորի տոհմի ժառանգական աթոռակալությունը: Աղբիանոսյան տոհմը նրա համար չարյաց փոքրագույնն էր[33]: Պետք է ենթադրել, որ, նախևառաջ, հայոց թագավորն այդ քայլով քաղաքական և տնտեսական առումով թուլացնում էր Լուսավորչի տոհմին: Մյուս կողմից, Լուսավորչի տոհմն ավելի շատ հռոմեական կողմնորոշում ուներ, ինչը հակասում էր հայոց եկեղեցու անկախացմանն

---

[26] Փավստոս Բուզանդ, էջ 344:

[27] Տե՛ս The Cambridge Ancient History, volume XIII, The Late Empire, A. D. 337-42 5, edited by A. Cameron, P. Garnsey, New York, 1998, p. 82 -83.

[28] Պատմահոր վկայությամբ՝ Ներսեսից հետո կաթողիկոս է ընտրվել Աղբիանոսյան տոհմից Սահակը (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 374:)

[29] Մովսես Խորենացի, էջ 374:

[30] Տե՛ս Histoire du Bas-Empire, commençant à Constantin-le-Grand, par Ch. Le Beau, tome troisième, Paris, 1819, p. 444.

[31] Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 2 11:

[32] Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 114:

[33] Տե՛ս նույն տեղում, էջ 114:

ուղղված քայլերի էությանը: Ուստի, հայոց թագավորն որոշեց կաթողիկոսական աթոռը հանձնել Աղբիանոսյանների տոհմի իրավասությանը:

Բնականաբար, Պապի այս քայլն առաջացրեց Կեսարիայի մետրոպոլիտի ցասումը: Ինչպես հավաստում է Փավստոս Բուզանդը, վերջինս հրավիրեց «ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին նահանգին Կեսարու առանց հայրապետին. և գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս: Եւ նոյնպէս և գրեցին թուղթ առ թագաւորն Պապ, և լուծին զիշխանութիւնն կաթողիկոսութեանն. զի որ լիցին հայրապետ Հայոց, նա դրանն արքունի իշխեսցէ՝ զհացն օրհնել. և մի իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց. որպէս սովորութիւն էր ի բնէ»[34]: Այսինքն, կարող ենք ամրագրել, էր չնայած Պապի այս քայլը դիտվեց որպես հայոց եկեղեցու անկախացմանն ու Կեսարիայից հոգևոր կախվածության նվազեցմանն ուղղված գործընթաց, այնուամենայնվի, դրվեց նաև արգելք, ըստ որի՝ կաթողիկոսն իրավունք չուներ Մեծ Հայքում եպիսկոպոսներ ձեռնադրել, ինչպես ի բնե սովորություն էր: Փավստոսը Հուսիկի մասին գրում է, թե «Եւ սա քրիստոնեայ, բայց համարձակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկչոտ էր և հաւան, և ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր 'ի լռութեան և 'ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոյ»[35]: Հիրավի, Պապի այս քայլն ունեցավ համազգային նշանակություն: Սա վկայում էր Պապի ինքնուրույն ներքին քաղաքականություն վարելու մասին: Բ. Հարությունյանն իրավացիորեն նշում է, որ հռոմեական արքունիքի աչքում, անկասկած, Պապի բազմաթիվ «մեղքերի» մեջ առաջնակարգ տեղ էր զբաղեցնում կաթողիկոսին ձեռնադրության համար Կեսարիա չուղարկելը[36]: Լեոյի բնորոշմամբ՝ «արևմտամոլությունը համարվել է հայոց եկեղեցու կուռք, որի ամենանշանավոր զոհը Պապն էր»[37] Համակարծիք ենք նաև Ե. Մուրադյանի այն տեսակետին, ըստ որի՝ ազգային եկեղեցու անկախացման գործընթացը, որ դեռևս սկսվել էր Արշակ Բ-ի օրոք, իր տրամաբանական ավարտին հասավ Պապի օրոք[38]:

---

[34] Փավստոս Բուզանդ, էջ 346:
[35] Նույն տեղում, էջ 346:
[36] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հտ. Բ, գ. Ա, էջ 136:
[37] Լեո, Հայ կղերական դիվանագիտություն, Ե., 1934, էջ 34:
[38] Տե՛ս Մուրատեան Ե., նշվ. աշխ., էջ 153:

Եզրակացություն

Պապի ներքին քաղաքականության արդյունքում Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունն ենթարկվեց համակարգային կրպափոխման.

1. արտաքին ճակատում գտնվելով պատերազմների մեջ և հավատարիմ մնալով իր նպատակին՝ հասնելու Մեծ Հայքի լիակատար ինքնուրույնությանը, Պապն էական քայլեր ձեռնարկեց երկրի ներքին միասնականության ամրապնդման և բանակաշինության ասպարեզում: Այդ նպատակին հասնելու համար նա երկրի մեծամեծերին, գավառակալ ու գավառատեր նախարարներին, ինչպես նաև ամբողջ բնակչությանը համախմբեց իր շուրջը: Կարճ ժամանակում հայոց բանակի թիվը 10 հազարից հասցրեց ավելի քան 90 հազար:

2. Զուգահեռ հայոց թագավորը քայլեր ձեռնարկեց դավաճան իշխաններին պատժելու ուղղությամբ, ինչի վառ ապացույցն էլ հանդիսացավ Հայր մարդպետի սպանությունը:

3. Ի շահ պետության զարգացման ու հզորացման էապես նա թեև թուլացրեց տնտեսապես հզորացած եկեղեցու դիրքերը, սակայն միաժամանակ ձգտում էր հասնելու հայոց եկեղեցու անկախացմանը, որի ապացույցն էր հայոց կաթողիկոսի ձեռնադրումը Մեծ Հայքում: Թիրախ ունենալով երկրի հզորացումը՝ երիտասարդ գահակալը փորձում էր պետության բոլոր կարևոր օղակները համախմբել արքունիքի շուրջ: Սա վկայում էր Պապի ինքնուրույն ներքին քաղաքականություն վարելու մասին:

Հայոց թագավորի վերոնշյալ ձեռնարկած քայլերն ունեցան համազգային նշանակություն: Այս առումով, Պապ Արշակունին մեր պատմության ամենաեռանդուն պետական գործիչներից է:

Эдгар Варшамян

Внутренняя политика Папа Аршакуни

Резюме

В результате внутренней политики Папы Аршакидское царство Великой Армении претерпело системную трансформацию.

1. Находясь на внешнем фронте в войнах, оставаясь верным своей цели достижения полной независимости Великой Армении, Папа предпринял важные шаги для укрепления внутреннего единства страны и в облости армейского сторительства. Для достижения этой цели он объединил вокруг себя великих людей страны, губернских и губернских министров, а также все население. За короткое время численность армянской армии увеличил с 10 тысяч до 90 тысяч.

2. Параллельно армянский царь предпринял меры, чтобы наказать вероломных князей. Убийство Айр Мардпета было ярким тому доказательством.

3. В интересах развития и укрепления государства он значительно ослаблял позиции экономически окрепшей церквы, но в то же время добивался самостоятельности Армянской церквы, о чем свидетельствует рукоположение армянского католикоса в Великой Армении. Стремясь укрепить страну, молодой правитель пытался объединить вокруг двора все могущественные круги государства. Это свидетельствовало о независимой внутренней политике Папы.

Вышеупомянутые шаги, предпринятые армянским царем, имели общегосударственное значение. В этом отношении Пап Аршакуни является одним из самых энергичных государственных деятелей в нашей истории.

Edgar Varshamyan

Pap Arsacid's domestic policy

Summary

As a result of the Pape's domestic policy, the Arsacid Kingdom of Greater Armenia underwent a systemic transformation.

1. Being on the foreign front in wars, staying true to his goal of achieving the full independence of Greater Armenia, the Pap took significant steps to strengthen the country's internal unity and build an army. To achieve this goal, he united the great men of the country, the provincial and provincial ministers, as well as the entire population around him. The number of the Armenian army increased from 10 thousand to 90 thousand.

2. At the same time, the Armenian king took steps to punish the treacherous princes, which was vividly proved by the murder of Hayr Mardpet.

3. In the interest of the development and strengthening of the state, he significantly weakened the position of the economically strengthened church, but at the same time sought the independence of the Armenian Church, as evidenced by the ordination of the Armenian Catholicos in Greater Armenia. Aiming to strengthen the country, the young ruler tried to unite all the powerful circles of the state around the court.

In this regard, Pap Arsacid is one of the most energetic statesmen in our history.

Խմբագրություն է ուղարկվել 17. 07. 2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 02. 08. 2022թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022